նինք։* դրա փոխարէն հրատարակում ենք մի փոքրիկ բնագիր նոյն նիւթի մասին տարբեր բովանդակութեամբ, որի օրինակը մեր ձեռքն ընկաւ յօդուածը կարդացած օրը։ Գէորգ կաթուղիկոսի ժողոված ձեռագրերի համարը 11-ն է թղ. 25-ա»։**

Պատմութիւն ս. Գեղարդեանն եւ այլ տնօրինականացն Քրիստոսի։

«Վասն սուրբ և փրկական տնօրինականացն սրբութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ այսպէս գտաք ի գործոց ոսկեգրով ի պատմագիրք թագաւորութեան ի քաղաքն Կոստանդինուպօլիս և այսպէս պատմեցաւ։ Յորժամ առին զթագաւորութեան քաղաքն՝ մեծ թագաւորն Փռանկաց բացեալ զմեծ եկեղեցին զսուրբն Սոփիայ։ Եւ մեծ պարսաւանօք կոչէր զամենայն քաղաքն և պատրիարքն. և զնախաբարս սուրբ եկեղեցւոյն և խնդրէր զփրկական սրբութիւնս. և նոքա զոր ունէին ցուցին. և ապա բերին զմեծ գործոցին պատմարանն և էր այսպէս գրեալ։

Պատմուճանն աստուածային որ փոր անկեալ էր ամենեւին և զարգիոն նափորան տուեալ սբ. առաքելոցն Շիղա և Տիմոթիայ. և նոցա տարեալ ի Սելեւկիայ[1] կղզին և կայ մինչև ցայսօր։

Պարէզօան և զպաստառակալն և պանեալ պարմանձանն Արգարու թագաւորի Մատթէոս Աւետարանչի տարեալ ի յԱրաբիա Միթթայ[2] որ կղզի է և կայ մինչև ցայսօր։

Զքղամիթն կարմիր և զերկու մասն պըսակին փշոց առաքեալն Մարկոս տարեալ Սպանիա ի Վէնէտիկ[3] քաղաք։

Զկենսաբեր[4] նափորան և զմին բեւեռն և զկաստն որ կոչի աքցան և զվարշամակն որ ոչ կայր ընդ այլ կտաւսն, այլ ուրուն ծալեալ ի մի կողմն տարեալ՝ զայն երկիրն Նաւեաց որ այժմ ասի Համշէն Մեծ մօտ ի Ճանէթ և ի Տրապիզոն քաղաքն։ Նդին առաքեալքն ի բարձրագիտակ լերին. և ամպ և մէգ շուրջ է զնովաւ զոր ոչ ոք կարէ ելանել և մտանել ի նա մինչև ցայսաւր։

Իսկ զարդի պաստառակն Տեառն որ կապեալ ի վերայ խաչին էր որ արեամբ թացաւ, որ ոչ ոք կարաց հասանել ի ներս զի որ մերձենայր հրով այրէր։ Զայս Յոհանէս աւետարանիչն ունէր և տարաւ ի Յակիսա[5] կղզին Յոկաս քաղաք և կայ ի նմին։

Աստուածամաւր պատմուճանն և ծիրանիսն յՈրմեական կղզոյն կա. խանձարուրն ի Հռոմ քաղաք կայ. մոգարեր հանդերձն արքայութեան ի Սելեւկիա[6] կղզոյն յԱտական քաղաք կայ։

Սուրբ սեղան վերնատանն և դենճակն և այլ սպասքն ի Կոստանդինուպօլիս է. ձիաւորեալ բեւեռն որ է ոտին և սուրբ ձեռացն՝ ի նոյն թագաւորանիստն է։

Զարման աթոռն որ է ծորն և պատառ խնկոցն ի Յարակաս կղզոյն Նորկադիայ քաղաքն կայ։

Հայրական տուեալ զգիրն կենաց անբաց և անընթեռնուլ զոր առեալ սրբոյն Պետրոսի տարեալ Յարակիա կղզին ի Յարիոց[7] քաղաք. զոր սուրբն Բագրատ դարձոյց և զծին կուռան խորտակեաց և կայ անդ. Դ զինուորի գեղարդն որ զկողոյ փրկական աղբեր արեանն Էհեղ զոր առեալ Ղունկիանոսի որ կոյր էր ի ծնէ. հարեալ ի կողմն փրկչական առժամայն լուսաւորեցաւ կայ ի Գեղարդ։

Աստուծոյ արեամբ ներկեալ սուրբ գեղարդն

---

* Նշանակում ենք միայն թիւ 491 բաց նոր ցուցակի թղ. 151 «Տեառն Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ ի պատմուճան Տեառն» Ձեռ. գրուած է 1618 թուին. եւ ճաղընտիր թիւ 937 (4) թղ. 124 բ. «Պատմութիւն հանդերձիցն Տեառն եւ դաստառակին եւ պատկերին սուրբ Յուսնայ», գրուած Հայոց Ջե փրկ. 1456 թուին։

** Ցուցակագրութեան շարունակութեան մէջ հանդիպեցինք երկու ուրիշ օրինակի եւս թիւ [Բ] 400 թղ. 147. եւ [Գ] 420 թղ. 487 ուր վերնագիրն է. «Վասն տնօրինականաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Այսպէս գտաք ի պատմագրացն . . » Առաջինը գրուած է 1663 թուին, երկրորդը 1692 թուին։ Ձեռագրերիս տարբերութիւնները որ խիստ շատ էին՝ թէեւ պատրաստած, մեզնից անկախ պատճառով չկարողացանք նշանակել, բաւականացանք ընթերցուածները արտագրելով։

1. Գ. ի Սիլիկիա ի կղզին։

2. Բ. Միթրաց։ 3. Գ. ի Ասպանի եւ ապա բերին Վենետիկ։ 4. Գ. Զերնափորն. Բ. զերկնարեր։

5. Գ. Ակիսա։ 6. Ա. Լեսեւկիա։ 7. Գ. ի Արիոց։

որ ի վերոյ յիշեցաք և պսակ փշոցն Յովսէփ Արեմաթեացւոյն որ Քրիստոս ի խաչէն իջոյց սուրբ Աստուածածին ածելով և պատանեաց և եդ ի նորափոր վիմին և զայն աստուածաշնչափ աջն․ և սուրբ շիշ իւղոյն ազնուականին որ ի քիչ մնացեր էր և Աստուածամօր պատկերն սուրբ առաքեալն Թադէոս տարեալ ի Հայս։

Այս է նշան սուրբ գեղարդեանն և այսու օրինակաւ ճանաչէ՛ք, զի մի խաբեսցին զձեզ նենգաւոր ազգն Յունաց, որ Թագաւոր սուրբք և աստուածասէրք բերեալ զերկնային պսակն սուրբ հաստատելոյն Քրիստոսի և յամենայն սուրբ յեկեղեցիս Հռչակայ պարծանք։

Եւ արդ սուրբ գեղարդն Քրիստոսի՝ յերկնային զանձն լոյս կայ ի խաւարի ծածկեալ աշխարհին Հայոց և որք տեսանեն զնա մի տեսցեն զմահ յաւիտենից․ և ոչ իշխեսցէ նեռն սահմանս և որ թագաւորութեանն, որ կայ մնանել ի յիմացեալ և պատճեալ թագաւորութիւն այնմ աշխարհին, սակաւ նուազի ժամանակս։ Եւ նմանութիւն սուրբ աստուածագիր գեղարդեին այսպէս է։

Դրմբէթաց և ի վեր քարշեալ գլուխ նորա որպէս նիզակի սուր առ Հաստատ և յերկնային և Հրեշտակաց ձևեալ նման խաչի փորեալ, և զփորեալ Հարուածն յանդրէն Բ կողմանէ յերեսաց սուրբ խաչին բևեռեալ և բևեռամխի Դ որպէս Տէրն ի խաչին և խնծոր աճեր խաչին աղիւսայ նման և ԲԺ-ան կողմն յօրինակ առաքելոցն․ և վայր կողմն փոր նիզակին Դ մատին չափով․ բայց ոչ այլ ինչ քանդակեալ այլ ամենեին անպատ և Հաստատ․ այս է նշան գեղարդեանն։

Տիրամօր պատկերն ի Հոգոց վանքն է, ի Թողկաց գաւառին։

Եւ շիշ իւղոյն յերկիրն Տարաւնոյ ի վանքն Եղեգնի։ Ի ճանաչել Արեմաթեայն աջն ի Ասբերան գաւառին՝ ի գիւղն որ առաքելոյն Թադէոսի անուամբն է․ և պսակ փշոցն իւր վանքն կայ ուր նահատակեցաւ առաքեալն սուրբ ի Զարեանդ գաւառի։ Եւ այսպէս աւրինակեցաւ անօրինակ սրբութիւն ի Հռոմ գրէ ի Հայ թարգմանեցաւ և բերաւ ի Հայս, յորումէր թիւս ՃՀԶ Քրիստոսի փառք յաւիտեանս»։

Ձեռագրիս տարեթիւը յայտնի չէ, ինչպէս նաև գրչի անունը․ ԺԷ-րդ դարը կարող է նրա գրութեան սահման ընդունուիլ։ Իսկ թէ յիշատակարանը ինքը երբ է ծագել և թէ արդեօք հայերէն է եղել բուն բնագիրը, թէ օտար լեզուից է թարգմանուած, այդ մասին առայժմ կարող կլինէինք միայն ենթադրութիւններ անել։

Մեսրոպ վարդապետ․

1898 թ․ 10 մարտի․

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ․

Ուսուցումն քրիստոնէական կրօնի․ — Դասախօսութիւն Սահակ քահանայի Սահակեանց․ Տփխիս․ 1898․ գինը 1 ռ․ 50 կ․

— Սանթօ (վէպիկ հայ բօշաների կեանքից)․— Թիֆլիս, 1898․ գինը՝ 30 կ․

— Ամուրին (պատկեր)․— Ցարութիւն Թումանեանց․ Թիֆլիս, 1898․ գինը՝ 20 կ․

— Շէլլուի սպանութիւնները (Ց․ Խուբլարեանի և միւսների գործը)․ Զինուորական դատարանի քննութիւնը Շուշում․ — «Նովոյէ Օբօզր․» լրագրից թարգմ․ Ս․ Հ․, — Թիֆլիս․ 1898․

— Վրացի Պօէտ Ակակին Հայերի մասին․ — «Նովոյէ Օբօզր․» լրագրից թարգմ․ Ս․ Հ․։ Թիֆլիս․ 1898․

— ՏԱՐԵՐՔ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ․

ա․ Նոր Կենդանաբանութիւն և Մարդաբանութիւն․ — Հ․ Սիմէոն Երեմեան, ի Մխիթարեան ուխտէն․ (զարդարեալ 450 պատկերօք)․ Վենետիկ․ — Ս․ Ղազար․ 1896։

բ․ Հանքաբանութիւն․ — Հ․ Ս․ Երեմեան, — Վենետիկ․ 1898․

— Նկարներ (ծաղկաքաղ իմ նամակներից)․ — Ն․ Ցարոյ, — Թիֆլիս․ 1898․